«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

31 Մայիսի 2023, N 7 - 6

041101.01.6 «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ (ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ)» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆԻՑ ՍԿՍԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով ֆինանսական հաշվառման ամբիոնում ձևավորված մասնագիտական խմբի կողմից մշակված մագիստրոսական ուսուցման 041101.01.7 «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» մասնագիտության՝ վերջնարդյունքների պահպանմամբ, սակայն ACCA-ի միջազգային կրթական ծրագրին համապատասխանեցնելու նպատակով դրանցից բխող դասընթացների կազմի, կառուցվածքի, կրեդիտավորման չափերի և ժամաքանակի 10 տոկոս շեմի գերազանցմամբ վերանայված կրթական ծրագրի նոր ուսումնական պլանը հաստատելու մասին հարցը, **արձանագրելով,** որ ACCA-ի միջազգային կրթական ծրագրին համապատասխանեցնելու ընթացքում կրթական ծրագրի բովանդակությունն ու վերջնարդյունքները մնացել են անփոփոխ, իսկ դրանցից բխող դասընթացները և նոր ուսումնական պլանը մշակվել են «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, գնահատման և մշտադիտարկման կարգի» դրույթների պահպանմամբ, փորձաքննության արդյունքում արժանացել են որակի ապահովման բաժնի դրական եզրակացությանը, քննարկվել են կրթական ծրագիրը սպասարկող առանցքային ամբիոնների հետ, միաձայն կողմ քվեարկությամբ հաստատվել են ֆինանսական հաշվառման ամբիոնի 2023 թվականի մայիսի 12-ի նիստում, հաստատման են երաշխավորվել համալսարանի գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի մայիսի 19-ի թիվ 2 նիստում՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել մագիստրոսական ուսուցման 041101.01.7 «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» մասնագիտության կրթական ծրագրի նոր ուսումնական պլանը:
2. **2023-2024** ուսումնական տարում 041101.01.7 «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» մասնագիտության առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա ընդունված ուսանողների ուսուցումն իրականացնել և ուսումնական գործընթացը կազմակերպել նոր ուսումնական պլանով:

3. Ներառյալ մինչև 2023-2024 ուսումնական տարին 041101.01.7 «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» մասնագիտության առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա ընդունված ուսանողների ուսուցումը շարունակել ընդունելության պահի դրությամբ հաստատված և գործած ուսումնական պլաններով:
4. Հանձնարարել ուսումնական բաժնին՝ UMS համակարգում **2023-2024** ուսումնական տարվա համար մինչև 2023 թվականի հունիսի 20-ը 041101.01.7 «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» մասնագիտության առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ուսուցման կազմակերպման համար ձևավորել սույն որոշմամբ հաստատված ուսումնական պլանի համապատասխան մոդուլները:
5. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. մայիսի 31
Երևան